ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՋՐԱՌ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0010, Վարդանանց փակուղի 8, (6-րդ հարկ), հեռ.՝ 012 74-00-77, էլ. փոստ info@jrar.am

N 1433

ք. Երևան

«18» 11 2024 թ.

«ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ
Հասցե՝ ՀՀ ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Օգանովի փ., շ78/14
ՀՎՀՀ՝ 01303697
էլ. հասցե՝ tender-consult1@yandex.ru

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև (այսուհետ՝ Կատարող) (այսուհետ՝ Ընկերություն) 20.12.2023 թվականին կնքվել է N «ՀՀ ՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որով Կատարողը ստանձնել է հոսքաչափերի տեղադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով՝ այն է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:

21.12.2023 թվականին «Ջրառ» և «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» Ընկերությունների միջև կնքվել է «20.12.2023 թ. կնքված N: ՀՀ ՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1 պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին» N 1 Համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր):

Համաձայնագրի 1.1 կետի համաձայն հաստատվել է Պայմանագրով աշխատանքների կատարման նոր ժամանակացույց՝ այն է մինչև 2024 թվականի ոռոգման սեզոնի սկիզբ (հաստատված՝ Համաձայնագրի N 1 հավելվածի):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 706-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կապալի պայմանագրում նշվում են աշխատանքը կատարելու սկզբնական և վերջնական ժամկետները: Կողմերի համաձայնությամբ՝ պայմանագրում կարող են նախատեսվել աշխատանքի առանձին փուլերի ավարտի (միջանկյալ) ժամկետներ:

Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքը կատարելու ինչպես սկզբնական և վերջնական, այնպես էլ միջանկյալ ժամկետները խախտելու համար, եթե այլ բան սահմանված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ նախատեսված չէ պայմանագրով:

Պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանգրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Պայմանագրի 5.1 կետի համաձայն՝ Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

Հայտնում ենք, որ «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» Ընկերությունը սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն չի ներկայացրել համապատասխան աշխատանքների կատարման վերաբերյալ Պայմանագրի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը:

Հարկ է նշել, որ «Ջրառ» Ընկերությունը 08.04.2024 թվականի 475 գրությամբ տեղեկացրել է Կատարողին, որ մինչև ոռոգման սկիզբը անհրաժեշտ է ավարտել ուլտրաձայնային հոսքաչափերի տեղադրումը՝ խողովակներում ջրահոսքի առկայության պայմաններումգործարկման և կարգաբերման աշխատանքները ժամանակին ավարտելու համար: Միաժամանակ նույն գրությամբ Կատարողը տեղեկացվել է, որ ոռոգման սեզոնը սկսվում է 2024 թվականի ապրիլի 15-ից:

Այնուհետև «Ջրառ» Ընկերությունը 22.05.2024 թվականի թիվ 709, 30.08.2024 թվականի թիվ 1101, 12.09.2024 թվականի թիվ 1140, և 02.10.2024 թվականի թիվ 1204 գրություններով Կատարողին տեղեկացրել է հնարավոր բարենպաստ պայմանների առկայության դեպքում ստանձնած և չկատարված պարտավորությունները սեղմ ժամկետում ավարտելու, հակառակ դեպքում չկատարված պարտավորությունների մասով իրավական հետևանքների մասին, որոնք բոլորն էլ «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» Ընկերության կողմից մնացել են անպատասխան, իսկ Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարված:

Հարկ է նշել, որ 02.10.2024 թվականի թիվ 1204 գրությունով Կատարողին տեղեկացվել է նաև, որ «Ջրառ» Ընկերության աշխատակիցների կողմից սույն Պայմանագրի շրջանակներում 2024 թվականի հոկտեմբերի 8-ին իրականացվելու է ստուգայց: Կատարողի կողմից կատարված աշխատանքների՝ ուլտրաձայնային հոսքաչափերի տեղադրման, գործարկման և կարգաբերման փաստագրման նպատակով, ինչի արդյունքում արձանագրվել է, որ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ կատարված չեն:

Պայմանագրի 2 կետի 2.1.3 ենթակետի համաձայն

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջների

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Ուստի, ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով, որ «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» Ընկերության խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 3.1 կետի 3.1.4 ենթակետի «բ» պարբերության դրույթով՝ «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը միակողմանի լուծում է «ՀՀ ՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1»

Հայտնում ենք, որ «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» Ընկերության նկատմամբ կկիրառվեն «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները գանձելու (ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900008000664 և 900008000698 գանձապետական հաշվեհամարներին փոխանցելու) նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերությանը սպասարկող բանկի կողմից «ՀՀ ՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1» ծածկագրով գնման պայմանագրի տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ամբողջությամբ վճարվելու դեպքում, անհրաժեշտ է այդ մասին գրավոր տեղեկացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագիրը):

Տեղեկացնում ենք նաև, որ եթե վճարման ենթակա գումարը փոխանցվի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները և 2-րդ մասի պահանջները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ Ա.Ս. ԱԲԳԱՐՅԱՆ